21. ՄԱՐԴՈՒ ԱՂԵԿ ՈՒ ՎԱՏ ԳԻՏՑՈՂ ՏՂԵՆ

Խեղճ մարգումի տղեմի կէղնի։ Էկար բարով ու խերով։

Կիտան կարդալու էտ տղին։ Ինչ օր կա չկա ուրանց կծախին, կիտան ուրանց տղի օղուրին, օր կարդալ սովրի։

Ուրանց կմնա թաղիք մի ու կարպետ մի։ Տղեն գիգա կըսե.— Ապո՛, իմ կարդալ թողեցի կիսատ։

Մարդ կհ՝ելնի էն կարպետն ու թաղիք լե կծախե, կիտա տղի կարդալու հախ։

Իրեք սանիաթ կսովրի կարդալու մեջ. մեկն՝ մարդու աղեկն ու վատ կհանե իրարուց, մեկն լե ձիուն, մեկն լե կիշեռքի ծանդր ու թեթևը։

Հորն օր կըսե՝ «Ես իմ սանիաթ թաքմիլ չըմ էրերի», հեր կտանե տղեն կծախե։

Կտանի, թագավորին կըսե.— Էդա տղեն բերեր իմ կծախիմ, ա՛ռ քղիկ։

Ինչ օր է ուր գին, թե ճանկ մի, թե բեռ մի՝ կիտա թագավոր էդ տղի հոր, աղեն կառնե։ Պապուց կհարցու թե.— Քու տղի սանիաթն ի՞նչ է։

Կըսե.— Ջիու աղեկն ու վատ, մարդուն ու կշեռքի ծանդրը ու թեթև դինա։

Կմնա ժուկ ու ժամանակ մի, թագավոր կելնի կըսե. «Կանի, ես էդա տղի սանիաթ գիտնալն պըտի ջոբեմ, տեսնամ սո՞ւտ է, օղո՞րգ է»։ Ու վոգիրին կըսե.— Գնա՛ ֆըլան թագավորին ըսե. «Իմ թագավոր աղեկ ձի մի գուղե, հըմալ օր խալատ-խըսուր չէղնի»։

Վոգիր կէրթա կբերե։ Թագավոր կելնի էդ տղին կկանչե, կըսե.— Արի տես, էդա ձին աղե՞կ է, վա՞տ է։

Տղեն գիգա, կըսե.— Էդա ձիուն սկի խալատ չկա, շատ աղեկ ձի է, մինակ մուզուգի թանոթի ձեն օր առնե, կը խըստվըստա, մարդ կղարկե գետին։ Էգի մախսուս ին ճամբած օր դու հեծնաս, ղայ էղնիս։

Կելնի ձին կիտա ուր հ'առջևու մարդոց կըսե.—Հլա հեծեք, լա-- ընք, տեսնանք իմա՞լ է իգա ձին։

Կհեծնին, կքշին հ'ոցկա հ'ոնցկի, քիչ մի տեղ կէրթա մուզուգի մի ձեն կառնե, ձին կխոտի, կվերցու թագավորի ծառեն կղարկե գետին, կմեռնի։

Թագավոր կտեսնա օր տղեն իմաստուն տղա է, բինիշ մի կի-- դա էդ խոսքի վրեն տղին։

Օրմ' լե կըսե.— Արի, էդա իմ նազիր-վոզիրներու տղեկներու- մեշ տես ո՛րն է աղեկ, ո՛րն է վատ։

Գիգա, կաչքե, կաչքե, էն մեկ տղի թևեն կբռնե։ կըսե.— Իդա տղեն քում չէ, շատ գեշ է, ու շատ գեշ բնավորութեն ունի։

Թագավոր կավտա, քենի օր ձիու մասալեն տեսեր էր, կտանե օր կախե։

Թագավորի կնիկ կթալե ուրին էրկու օտաց վրեն, կըսե.— Ես- օղորդ կըսիմ, իմ տղեն մը՛ կախեկ,— կըսե,— մղիկ վոզիր մի կեր, շատ խորոտիկ էր, էդոր հետ սիրողութեն էրի, էղավ էտա տղեն։

Թագավոր կտեսնա օր կնիկ օղորդն ըսեց, էլ տղեն չկախե, աղատ կէնե։

Ժուկ մի կմնա, ուրիշ թագավոր մի, աչից պտուղ մի կճամբե էդ թագավորին։

Էդ թագավոր լե կդնե կիշեռքի մեջ, կքաշե, ինչ խըդար կքաշե՝ աչից հետ չի գա։ Տղեն կկանչե, կըսե.— Տղա՛, արի տեսնամ իդա ի՞նչ բան է, ես մեռա օսկի լցնելով, էդա աչից հետ բար չի գա։

Էն սահաթ տղեն աչից մեջ փշու մի հող կթալե, էրկու իրեք հատ օսկի կթալե, աչք կթեթվնա, աչից հետ բար գիգա։

Թագավոր կըսե.— Տղա՛, էգ ի՞նչ է, էդոր մեկնութեն ի՞նչ է։

Տղեն կըսե.— Էդ իսանի աչքը, հազար բեռ լե հ'ըլնաս, աշ- խըրքեն չկշտանա։ Եբ օր պտղուց մի հող թալեն իսանի աչք, նոր- կկշտանա աշխըրքեն։

Թագավոր էդ իրեք բանի վրեն օր ջրռբեց տղին, տեսավ՝ իմաստուն ու խելքով տղա է, մեծ մասնաթ տվեց, էրեց ուրան տղա, դրեց ուր մոտ։